

Հրատարակում է
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԿԻՄ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

«Դ Է Գ Ի Ե Ր Կ Ի Ր» ճառենաշար
թիվ 11

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽ.
Գ Ո Յ Ո Ւ Թ Յ Ա Ն Պ Ա Յ Ք Ա Ր

ԳԻՐԲ Ա

ԵՐԵՎԱՆ 1993

Խմբագիր՝

ԲԱԳՐԱՏ ՌԻՆՈՒԲԱԲՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Ղահրամանյան Կ.

Ղ 287 Հյուսիսային Արցախ: [2 գրքով] Գիրք Ա: Եր.:

«Միջայլ Վարանդեան», 1993 -- 104 էջ:

Գրքի մեջ վիճաբանական, մատենագրական, արխիվային եւ բազմաբնույթ այլ նյութերի հիման վրա առաջին անգամ շարադրված է Հյուսիսային Արցախի՝ նորօրյա Շահումյանի շրջանի եւ Գետաշենի ենթաշրջանի, ամբողջական պատմությունը: Այն ներկայացված է համահայկական կյանքի ընթացքի մեջ եւ կապված շրջակա ժողովուրդների ու մեծ տերությունների ֆաղափական շահերի հետ, որի շնորհիվ պարզվում են անցյալի կնճոռոտ շատ հարցեր: Հասցեագրված է հայոց պատմությունը, մասնավորապես հայ ազատագրական շարժումները ուսումնասիրողներին, Արցախի պատմական նակատագրով հետաքրքրվող ընթերցողներին:

Ղ 0503020913
784(01)-93

ԳՍԴ 63.3(2Հ)

«ՄԻՔԱՑԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ» հրատ., 1993

ISBN 5-8079-0776-0



ՆԱԽԱԲԱՆ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ Արցախական աշխարհը միշտ էլ ունեցել է ինքնահատուկ տեղ ու դեր: Անցյալի բարդ ու դժվարին իրավիճակներում, սկսած ամենահեռավոր ժամանակներից, այն եղել է հայության համար կենսական համեմատաբար ապահով միջավայր՝ ունենալով լեռնային նահանգը պաշտպանելու համար բավականին զինական ուժ եւ տնտեսական ու մշակութային կյանքը զարգացնելու բավարար հնարավորություններ: Այդ պատճառով էլ մեր ժողովրդի ֆաղափական նակատագիրն այստեղ իր յուրահատուկ դրսեւորումն է ունեցել:

Արշակունյաց հայկական պետականության անկումից հետո (5-րդ դար) այստեղ ձեւավորվել է կիսանկախ փոքրիկ թագավորություն, որը հետագայում ներգրավվել է Բագրատունյաց համահայկական պետության կազմի մեջ (9-րդ դար): 10-11-րդ դարերում, ինչպես հայտնի է, Բագրատունիների կենտրոնական պետության շրջանակներում ձեւավորվեցին նրանցից վասալական կախման մեջ գտնվող մանր թագավորություններ ու իշխանություններ: Արցախում արդեն գոյություն ունեւ խաչենի իշխանությունը, որն էլ կարելու դեր ունեցավ լեռնաշխարհի կյանքում, մանավանդ միասնական պետականության անկումից հետո: Հետագա դարերում խաչենի իշխանությունն էլ իր հերթին մանրատվեց, առաջ եկան ֆաղափական փոքրիկ կազմավորումներ՝ մեխիություններ:

Ամբողջ 18-րդ դարում Արցախ աշխարհը հայ ժողովրդի ազատագրական պայքարի այն հիմնական օջախներից մեկն էր, որի հետ էր կապվում գլխավորապես հայ պետականության վերականգնման գաղափարը:

Պատմական անթիվ վայրիվերումներից հետո, 1918-1920 թթ. հայկական նորաստեղծ հանրապետության կազմում երկրամասն իր դժվարին ֆայերն էր կատարում ձեռք բերած ֆաղափական անկախության ամրապնդման ուղղությամբ: Անհավասար կռիվների մեջ դիմադրելով օսմանյան եւ մուսավաթական զավթիչներին, Արցախը պահպանեց իր անկախ իշխանությունը եւ միայն խորհրդային կարգերի օրոք, դիվանագիտական խաղերի մեջ, անջատվեց մայր Հայաստանից ու բռնակցվեց Ադրբեջանին: Բայց դա չարիքի շատ հայտնի կողմն է միայն: Զարիքի մյուս, թերեւս ավելի աղետալի կողմը եղավ այն, որ Արցախն էլ իր հերթին ծվատվեց: Նրա տարածքի մի մասում 1923 թ. կազմավորվեց ինքնավար մարզ, իսկ մյուս մասերը, կորզվելով մարզի իրավասությունից, մանրատվեցին ու մտցվեցին Ադրբեջանին ենթակա տարբեր շրջանների մեջ:

Այդպես բաժան-բաժան եղավ Հյուսիսային Արցախը: Երբեմնի Գյուլիստանի մեխիության տարածքի մի չնչին մասը ներառվեց մարզի մեջ, հիմնական մասը դարձավ Շահումյանի շրջան, գյուղերի մի խումբը՝ Գետաշենն իր շրջականերով, մտցվեց

խանլարի, որոշ տարածքներ էլ՝ կասում-իսմայլովի (Գերանբոյ) շրջանի մեջ: Նպատակը պարզ էր՝ փշուր-փշուր անել լեռնաշխարհի միաձուլյալ հայ բնակչությանը:

Հետագա տարիներին տարանջատված հատվածները բանիցս փորձեր արեցին վերամիավորվելու, մտնելու ինքնավար մարզի կազմի մեջ, սակայն այդպիսի ամեն մի փորձ ոչ միայն նպատակին չէր հասնում, այլև դաժանորեն պատժվում էր: Բոլոր միջոցներով խափանում էին մարզի հետ որեւէ կապը: Ոչ բարեկարգ ճանապարհ, ոչ տնտեսական կամ մշակութային հարաբերություն: Նույնիսկ սովորական հարեւանությունը դիտվում էր որպես ազգայնամուտություն եւ համապատասխան դառը հետեւանք էր ունենում:

Զնայած ուղղակի եւ անուղղակի բոլոր բռնություններին, Հյուսիսային Արցախը, սակայն, պահպանեց իր հայկական ոգին ու կերպարանքը: Ժողովրդի տարանջատված բեկորների միջև կապերը երբեք չխզվեցին, իսկ 1988-ից սկսվեց լայն, իսկական համաժողովրդական պայքար վերամիավորման ու ազատագրման համար:

Թե՛ հեռավոր անցյալում, թե՛ վերջին շրջանի ազատագրական պայքարի ընթացքում Հյուսիսային Արցախը հիմնականում բաժանել է մայր երկրին վիճակված պատմական ճակատագիրը: Սակայն նույն այդ ճակատագիրը ժողովրդի տարանջատված բեկորների առջև շատ հաճախ յուրատեսակ խնդիրներ է դրել, եւ Հյուսիսային Արցախն էլ յուրահատուկ ուղիներ է գտել այդ խնդիրների լուծման համար: Մի կողմից անհրաժեշտ է եղել դիմագրավել ամենօրյա փորձություններին, մյուս կողմից պահանջվել է ամենօրյա փորձությունների մեջ հնարավորություններ ստեղծել ու պահպանել՝ հետագա վերամիավորման ու ազգային անկախության համար:

Փոքրիկ լեռնաշխարհի ֆաղափական կյանքի պատմությունը գոյատևումի համար մղված պայքարի պատմություն է, որ կարող է ամբողջական դարձնել պատկերացումը Արցախի եւ ընդհանրապես հայ ազատագրական շարժումների վերաբերյալ: Այստեղ փորձ է արվել այդ պատմությունը դիտելու ոչ միայն համահայկական կյանքի ընթացքի մեջ, այլև կապված շրջակա եւ այլ պետությունների փոխհարաբերությունների ու ֆաղափական շահերի հետ, որի շնորհիվ պարզվում են անցյալի կնճռոտ շատ հարցեր:

ՄԵԼԻՔՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ԱՆԿԱՒՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ

Արցախը պատմական Հայաստանի տասնհինգ նահանգներից մեկն է եղել: Դեռևս հնագույն շրջանում այն ընդգրկված է եղել Վանի (Արարատյան) թագավորության սահմանների մեջ: Մեծ Հայքի միասնական պետության ստեղծման ժամանակ Վաղարշակ թագավորն իր երկրի համար սահման է դարձնում հայոց լեզվի տարածման շրջանակները (ինչպես տեղեկացնում է Մովսես Խորենացին՝ «զեզերը հայկական խօսիցըս»): Այդ երկրի հյուսիսային սահմանը Կուր գետն էր հանդիսանում, բնականաբար, նրա մեջ ներառված էր նաև Արցախը, որ գտնվում է Կուրից հարավ: Այս տեղեկու-

թյունները հաստատվում են նաև հին շրջանի հունա-հռոմեական բազմաթիվ աղբյուրների կողմից:¹

Արցախը հայոց աշխարհի անբաժանելի մաս են դիտել ոչ միայն հայ եւ հունա-հռոմեական աղբյուրները, այլև ռուս եւ այլ ազգի, այդ թվում եւ անցյալ դարի աղբյուրներից: Այսպես, դեռևս 18-րդ դարի վերջերին ռուս հայտնի գործավար Ա.Վ.Սուվորովը հին Հայաստանի եւ բուն Աղվանքի միջև սահման է նշում Կուր գետը: Ի դեպ, այդ ժամանակներում Հայաստանը նրա համար սահմանափակվում էր հիմնականում Արցախ աշխարհով:² Աբաս Կուլի-աղա Բաբխանովը ֆանիցս այդ միտքը հայտնել է. նա Հայաստանի եւ Շիրվանի միջև սահման է համարում Կուր գետը:³ Քննելով պատմական աղբյուրների վկայությունը, նա գալիս է այն հետևություն, որ «Բուր գետի աջ ափը, մինչև Արաֆսի թափվելու տեղը, կազմել է Հայաստանի սահմանը»:⁴ Ա.Ա.Ցագարելին հստակ գնահատում է Կուր գետից հյուսիս տարածված բուն Աղվանքը Կուրից հարավ գտնվող հայկական երկրից. առաջինը նա կոչում է Ալբանիա, երկրորդը՝ հայկական Աղվանք:⁵

Սակայն խորհրդային կարգերի օրոք, երբ Արցախը բռնակցվեց Ադրբեջանին, մանավանդ վերջին տասնամյակներում, այդ հանրապետությունում սկսեցին երեւան գալ գրքեր, որոնցում փորձ է արվում բռնակցված Արցախի ֆաղափական վիճակին հարմարեցնել անցյալի ամբողջ պատմությունը: Այդ կարգի հակազդիտական հրապարակումները հերքվել են հայագիտության մեջ սպառնիչ կերպով:⁶

Արցախի բնակչիմայական բարենպաստ պայմանները, մանավանդ նրա կարեւոր աշխարհագրական դիրքը, միշտ գնահատվել են երկրի աշխարհիկ ու հոգեւոր տեքերի կողմից: Պատահական չէ, որ Հայաստանում Բրիտանոնության տարածման ժամանակ առաջինների շարքում ուշադրություն են դարձրել երկրի այս կողմերում նոր հավատի

1 Այդ մասին հանգամանորեն տես Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երեւան, 1966, Բ.Ա.Ուլուբաբյան, Նաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երեւան, 1975, նույնի՝ Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց պատմության, Ե., 1981, Մ. В. Сибатян, Еще раз о южной границе Кавказской Албании, журнал "Лабетер" АН Арм. ССР, No 10, 1989, А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987 եւ ուրիշներ:

2 А. В. Суворов, Документы, том II, под. ред. Г. П. Мещерякова, Москва, Воениздат, 1951, с. 224-225.

3 Аббас-кули-Ага Бакиханов, Гулистан-Ирам, Баку, 1926, с. 3.

4 Նույն աշխ., էջ 8:

5 Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся до Грузии, том II, вып. II, с 1769 по 1801 год, под ред. А. А. Цагарели, СПб, 1902, с. XI, прим. 1.

6 Ասում ենք՝ սպառնիչ, նկատի ունենալով փաստերով, գիտականորեն հիմնավորելը: Սակայն Արցախի անցյալի ու ներկայի մասին հակազդիտական հրապարակումները շարունակվում են Ադրբեջանում: Դրանց անդրադառնալը մեր խնդրից դուրս է:

տարածմանն ու ամրապնդմանը: Դեռ ավելին, այստեղ հոգեւոր հայր է Նշանակվել Գրիգոր Լուսավորչի թոռը՝ Գրիգորիս Եպիսկոպոսը: Հայ գրեթե ստեղծումից հետո էլ առաջինների թվում Արցախ աշխարհն է եղել Մեսրոպ Մաշտոցի ուշադրության կենտրոնում:

Մեսրոպ Մաշտոցը, ինչպես հայտնի է, ձգտում էր դպրոցներ բացել առաջին հերթին երկրի ծայրաշրջաններում, որպեսզի ամուր մնա հայոց աշխարհի միասնությունը: Այդ առաքելությամբ նա անձամբ շրջեց Արցախում, հիմնեց հայկական դպրոցներ: Եվ դարեր շարունակ հայ գիրն այստեղ սրբություն է եղել ու իր սրբազան գործն է արել՝ պատվար հանդիսանալով հայ ժողովրդի այս հատվածի համար, հավատ եւ ուժ ներշնչելով նրան: Հյուսիսային Արցախի Վերին Շեն գյուղում թերեւս եզակի մի ուխտավայր կա՝ նվիրված հայ գրին: Այն հենց այդպես էլ կոչվում է՝ «Գիր-խաչ» եւ գտնվում է բնության նույնպես եզակի մի հուշարձանի մոտ, սուրբ համարվող մի վիթխարի սուսի ծառի տակ, որի բնի պարագիծը շուրջ ֆանսիինգ մետր է: Ժողովրդական ավանդության համաձայն՝ իր առաքելության ժամանակ այդ ծառը տնկել է Մեսրոպ Մաշտոցը:

Հայրենյաց հավատի ու լեզվի համար դեռեւս 5-րդ դարի կեսերին, Վարդանանց հայտնի պատերազմի ժամանակ, Արցախում մեծ համբերությամբ տանում էին բազմաթիվ նեղություններ, դիմադրում, ետ շարտում պարսիկ նվաճողներին: Այդ փորձության օրերում, ականատես պատմիչի վկայությամբ, Արցախը երկրի ամուր նահանգներից էր, որին ապավինում էր ժողովուրդը:¹

387 թ., ինչպես հայտնի է, Հայաստանը բաժանվեց հարեւան երկու բռնապետությունների՝ Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջեւ: Պարսկական մասում հայ Արշակունիների թագավորությունը շարունակեց իր կիսանկախ գոյությունը մինչեւ 428 թ., որից հետո այն վերացվեց: Երկրի տարածքը դարձավ մի առանձին մարզ Պարսկաստանի կազմի մեջ: Պարսկահպատակ մեկ այլ մարզ էլ, Աղվանք անունով, ձեւավորվեց Մեծ Հայքի Ուտիք եւ Արցախ նահանգներից՝ դրանք միավորելով Կուր գետից հյուսիս տարածված աղվանական ցեղախմբերի հետ:

Նորաստեղծ այս մարզի երկու մասերը գտնվում էին տնտեսական ու մշակութային զարգացման անհամատեղելի աստիճանների վրա: Կուրից հյուսիս տարածված էին աղվանական տարալեզու ցեղախմբեր, որոնք դժվար էր վարչականորեն միավորել, իսկ Կուրից հարավ Ուտիքն ու Արցախը միատարր հայկական բնակչություն ունեին, միասնական հավատ եւ դարեր ի վեր գտնվել էին միասնական թագավորության կազմի մեջ: Հայ պետականության անկումից հետո այստեղ իր ազդեցիկ դիրքը պահպանում էր Առանշահիկ նախարարական հնամյա տոհմը, որը, խորենացու «Հայոց պատմության» համաձայն, սերվում էր Հայկ Նահապետից: Այս տոհմի ներկայացուցիչ Վաչագան Բարեպաշտը 5-րդ դարի 2-րդ կեսին Աղվանք մարզի հայկական մասում ստեղծեց մի փոքրիկ թագավորություն:

Վաչագան թագավորը հայտնի է ազգանվեր ու եկեղեցանպաստ անթիվ գործերով, որոնց համար էլ «բարեպաշտ» մականունն է ստացել: Մովսես Կաղանկատվացու ա-

1 Եղիշէի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Երեւան, 1957, էջ 127:

նունով հայտնի պատմության վկայությամբ՝ Վաչագանը տարվա օրերի թվով եկեղեցիներ ու վանքեր է կառուցել¹, որոնց կից գործել են դպրոցներ: Գյուղ այցելելիս նա հաճախում էր նաեւ տեղի դպրոցը, մտնում դասարան, իր շուրջը հավաքում աշակերտներին: Հրամայում էր, որ բոլորը միասին, միաձայն կարդան, իսկ ինքը նրանց մեջ ուրախանալով պարծենում էր:²

Փոքրիկ թագավորությունը լիարժեք հասարակական-ֆաղափական կյանքով էր ապրում: Հատկապես ուշագրավ է Աղվանում եկեղեցական ժողով գումարելու եւ հատուկ կանոններ՝ «Սահմանադրություն կանոնական» ընդունելու հանգամանքը: Այդ կանոնները, որոնք մեզ են հասել բավական ամբողջական ձեւով³, վկայում են երկրամասում ոչ միայն հոգեւոր, այլ ընդհանուր հասարակական կյանքի բարձր կազմակերպական մակարդակի մասին:

Հյուսիսային Արցախում, ներկայիս Թալիշ գյուղի (ԱՂՀ, Մարտակերտի շրջան) մոտեւրում է գտնվել Վաչագան Բարեպաշտի թագավորանիստ գյուղը:⁴

Նույն այդ կողմերում է գտնվել նաեւ նրա ամառանոցը՝ Աղվենը:⁵

Բնականաբար, նրա եռանդուն հասարակական, շինարարական ու կրթական գործունեության շրջանակների մեջ ներգրավված է եղել թերեւս առաջին հերթին Հյուսիսային Արցախը, որտեղ մինչեւ հիմա էլ հոլովվում են Բարեպաշտ թագավորի մասին հյուսված գրույցներն ու ավանդությունները:

Վաչագանի հիմնած թագավորությունը գոյատեւեց մի քանի դար՝ մահաւելով պարսից իշխանությունների, հետագայում էլ՝ արաբ նվաճողների դեմ:

Արաբական խալիֆայության դեմ մղված հայ ժողովրդի ազատագրական կռիվների հաղթական ավարտից հետո այն մտավ Բագրատունիների ստեղծած միասնական հայկական պետականության կազմի մեջ: Այս պետության սահմաններում, ինչպես հայտնի է, 10-11-րդ դարերում սկսեցին ձեւավորվել Բագրատունիներից վասալական կախման մեջ գտնվող մանր թագավորություններ ու իշխանություններ: Արցախում Առանշահիկ թագավորության անմիջական շարունակությունը դարձավ խաչենի իշխանությունը: Այն տարածվում էր Մուղանից մինչեւ Սեւանա լճի ափերը եւ Արաքս գետից մինչեւ Գանձակի մատույցները:⁶

Բագրատունյաց թագավորության անկումից հետո (1045 թ.) խաչենը մի քանի դար շարունակ հայ իրականության մեջ բավական հզոր ֆաղափական կազմավորումներից էր, որտեղ նպաստավոր պայմաններ կային տնտեսության զարգացման, շինարարական ու մշակութային կյանքի վերելի համար: Նրա կազմի մեջ այդ շրջանում տնտեսական եւ հոգեւոր կյանքի նշանակալի վերելք էր ապրում Հյուսիսային Արցախը: Այդ մասին

1 Մովսէսի Կաղանկատուացու Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860, էջ 271:

2 Նույն տեղում, էջ 39:

3 Նույն տեղում, էջ 65-69:

4 Մակար Եպիսկ. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 230:

5 Լեո, Հայոց պատմություն, հ. 2, Երեւան, 1947, էջ 156:

6 Այս եւ նախընթաց շրջանի Արցախի ֆաղափական կյանքի մասին հանգամանորեն տես՝ Բ.Ա.Ուլուբաբյան, խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում:

են վկայում լեռնաշխարհում պահպանված պատմամարտարապետական հուշարձանները:
Հոռեկի վանքային համալիրը (Թալիշ գյուղի մոտ), կառուցված 13-րդ դարի երկրորդ կեսին, բայց՝ ավելի վաղ շինության հետևեռով, մինչև այսօր էլ կանգուն է ե հիպսոսուն և շարժում: Այս հնավայրում պահպանված մեծաթիվ հուշարձանները վկայում են, որ այստեղ վաղ ժամանակներում հոգեւոր ու վարչական կարեւոր կենտրոն է եղել: 13-14-րդ դարերում կառուցված եկեղեցիների ավերակներ, 1172, 1230 ե այլ թվականների կանգնեցված խաչքարեր են պահպանվել Հին Արխայի, Կոզեր ե այլ գյուղատեղիներում¹: 1308 թվականին կանգնեցված գեղեցիկ խաչքար է պահպանվել Մնաշեն գյուղից ոչ հեռու, հին հայկական Թողան ավերակ² գյուղատեղից փոքր-ինչ վերեւ կառուցված մատուռի դռան մոտ:³

Հյուսիսային Արցախի վարչաբաժնի վիճակի վերաբերյալ ուշագրավ տեղեկություն է պարունակում Գյուլիստան տանող ճանապարհի աջ կողմում, հին Արխայի մոտ, ձորի հանդիպակաց լանջին, Մանդուռին (մատուռի) աղբյուր կոչված վայրում 1252 թ. կառուցված եկեղեցու շինարարական արձանագրությունը.

ԹԻՒՆ: ՉԱ: ԷՐ:
ԿԱՄԱՆ ԱՅ ԵՍ ԵՆՍ
ԵՒ ԵՂԲԵՐ ԻՍ ԱԽՏԱՐ ԵՒ ՈՐԴԻ
ԻՍ ՇՆՈՐ⁴ ՇԻՆԵՑԱՐ ԶԵԿԵՂԵՑԻՍ
ՅԻՇԱՍԱԿ ՄԵՋ ԵՒ Ն/Ն/ՋԵՑԵՆՈՑ ՄԵՐՈՅ Ի
ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻ ՏՐ ՆԱՐԻՍԻ ԱՄԻՐ
ՈՒԹԻ ԻՒԱՆԻ ՎԱՐՀԱՄԵԱԿԻ⁵:

1252 թ. Աղվանից կաթողիկոսը, ինչպես հայտնի է, իրոք Ներսեսն է եղել,⁵ բայց թե ովքեր են արձանագրության մեջ հիշատակված Իվանը եւ Վարհամշախը, դժվարանում են ստույգ ասել: Հայտնի է, որ նույն այդ ժամանակներում Վահրամյան իշխան Աղբուղան ուներ Վահրամ, Զաբարե, Իվանե որդիներ:⁶ Սակայն բավարար հիմքեր չունենք այս ավագ ու կրտսեր եղբայրներին նույնացնելու արձանագրության մեջ հի-

1 Այդ մասին արժեքավոր ուսումնասիրություն է հրատարակել Սամվել Կարապետյանը (Արխայի ձորահովտում գտնվող պատմամարտարապետական հուշարձանները եւ դրանց նորահայտ արձանագրությունները. «Պատմաբանասիրական հանդես», 1984, №2, էջ 233-238): Հանգամանորեն տես սույն աշխատության «Հավելվածի» մեջ:

2 Այս ավերակից ոչ հեռու 19-րդ դարում հաստատվել են Բոչվոր անասնապահների մի քանի ընտանիքներ՝ հիմք դնելով ներկայիս աղբյուրանակալ Թողան գյուղին:

3 Մակար Եպիս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 252: Այս խաչքարը մինչև հիմա էլ կանգուն է նույն տեղում:

4 Մեր նախորդ հրատարակման մեջ սխալմամբ գրվել է «Ենոբ», որն ուղղվել է Սամվել Կարապետյանի կողմից (տես նրա նշվ. աշխ., էջ 234):

5 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 392:

6 Նույն տեղում, էջ 163:

շատակված անունների հետ: Նույն տարիներից (1260 թ.) այդ կողմերում, Գյուլիստանից ոչ շատ հեռու գտնվող Երիցմանկաց վանքի մոտ պահպանված մի մատուռի շինարարական արձանագրության մեջ նույնպես հիշատակված է Վահրամ շահ. «Թիւ ԶԹ էր, կանաւն աստոյ ես խուտում (Հոփսիսիմե) շինեցի գեկեղեցիս, եղբայր իմ Վահրամ շահ, ի հիշատակ մեզ եւ ծնողաց մերոց ի յիշխանութեան Ուֆանին եւ յամիրայութեան Փախրայդիինն եւ ի յառաջնորդութեան Տէր Սուփասին. յաղաբս...»¹:

Թուրք-սելջուկյան, բաթար-մոնղոլական եւ այլ արշավանքներից հետո հայ ժողովրդի համար առավել աղետալի եղան 15-րդ դարի 2-րդ կեսից ծայր առած արյունալի ընդհարումները Թուրքիայի ու Պարսկաստանի միջեւ՝ Հայաստանին տիրելու նպատակով: Այդ պատերազմները, ինչպես հայտնի է, 1555 թ. հանգեցրին Հայաստանի բաժանմանը երկու տերությունների միջեւ: Արցախը մնաց Պարսից գերիշխանության ներքո: Սակայն դրանով չդադարեցին արյունահեղություններն այս հողի վրա: Թուրքիան դրանից հետո նույնպես ամեն կերպ ջանում էր նվաճել Արցախը: 16-րդ դարի երկրորդ կեսից դրան ավելացան Դաղստանի ավարառու ցեղերի ասպատակությունները դեպի Արցախ, որոնք ամեն կերպ խրախուսվում ու հրահրվում էին թուրքերի կողմից: Իսկ Պարսկաստանի ներքին խառնակ վիճակը եւ գահակալական կոիվները թույլ չէին տալիս պաշտպանելու իր գերիշխանության ներքո գտնվող երկրամասերը:

Այսպես, 1579 թ. լեզգիներն Օսմանի առաջնորդությամբ շարժվում են Դամուր-Ղափից (Դերբենդ) հարավ, անցնում Կուր գետը: Պարսից կառավարիչը (բեկլեբեկը), որի նստավայրը թե՛ Գանձակ ֆաղաֆն էր, թե՛ Պարտավը, բախտի մահահույժին է թողնում հպատակ ժողովրդին ու նողոպրում: Ասպատակիչները «սփռեալ ընդ դաշտ եւ ընդ լեռինս, գԳանձայ, եւ գԲարտայ, գՋրաբերդ եւ գԽաչենք, գՎարանդ եւ գԴիգակ»², 4-5 օր շարունակ կողոպտեցին, ավերեցին ու գերեվարեցին, հետո վերադարձան իրենց տեղերը:

Լեռնաշխարհի եւ ամբողջ շրջակաների համար այդ արշավանքից էլ ավելի աղետալի եղավ նույն 1579 թվականին սկսված սովը, որ տեւեց շուրջ երկու տարի: «Եղեւ ահագին եւ անասելի սով այնքան, մինչև մարդիկ զագանացեալ անկան ի հումակերութիւն վասն որք մնալոյն ի մահոյն...», դառնացած գրում է Հովհաննիսիկ Վարդապետը:³ Սովի հետեւանքներն այնքան ծանր էին, որ ականատես պատմիչը դառնացած բացականչում է՝ «վա՛յ տեսողութեանս, եղբարք»:⁴

Այդպիսի հանգամանքներում խաչենի՝ արդեն հողմահարված իշխանության տարածում սկսում են համախմբվել լեռնաշխարհի զինական ուժերը, փորձում դիմագրավել ասպատակողներին, սեփական ուժերով պաշտպանել հայրենի հողը: Այսպես գործում են նախկին միասնական իշխանությունից ճյուղավորված զավառական վարչությունները՝ մելիքությունները:

1 Մակար Եպիս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 222:

2 Սամուելի Բահանայի Անցեոյ Հավաքումնք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, Հավելված. «Յոհաննիսիկ վարդապետի համառոտ պատմութիւն», էջ 189:

3 Նույն տեղում:

4 Նույն աշխ., էջ 190:

1639 թ., ինչպես հայտնի է, Թուրքիան ու Պարսկաստանը վերստին Հայաստանը բաժանեցին իրենց միջև, եւ վերստին Արցախը մնաց պարսից գերիշխանության ներքո: Չնայած այդ պայմանագրին, Թուրքիայում հասունանում էին ամբողջ Անդրկովկասը նվաճելու ծրագրերը: Դրան համընկնում էին Դաղստանում ձեռավորված ռազմաֆեոդալական ուժերի ավարտական արշավանքները, որոնք գնալով ավելի հաճախակի էին դառնում դեպի Կուր գետից հարավ ընկած շրջաններ ու Արցախ: Այս ամենը հրատապ են դարձնում լեռնաշխարհի ինքնապաշտպանության խնդիրը: Խորանում է ռազմավարչական կազմավորումների՝ մելիխոթյունների հզորացման ընթացքը: Պարսից իշխանություններն էլ շահագրգռված էին դրանում՝ Թուրքիայից ու Դաղստանից սպառնացող վտանգի հանդեպ լրացուցիչ ուժեղ պատվար ունենալու նպատակով: Տեղերում բնական ամրություններ կային, որոնք հեշտությամբ բերդ ու ամրոց կարող էին դառնալ: Կային մեծ թվով մետաղահանքեր ու զինագործ վարպետներ, իսկ ռազմական գործը, դարավոր ինքնապաշտպանության պայմաններում, դարձել էր համարյա մարդկանց կենցաղի մի մասը՝ հնուց ի վեր ծողովրդական շատ տոներն ու հանդիսությունները դարձել էին զինավարժության, ծիարշավների ու այլ մրցումների խրախուսիչներ:

16-17-րդ դարերում երկրամասի կյանքը նկատելի առաջընթաց է ապրում: Գեղեցիկ եկեղեցիներ են կառուցվում Հին Խրթափորում, Կողերում, Ներքին Շենում, էրֆաշում: Կառուցվում են Հերիֆավանքը՝ Ներքին Շենի մոտ, սուրբ Անապատը Գյուլիստանի մոտ, կերտվում են բարձրարվեստ խաչքարեր¹: Այդ ամենին զուգահեռ ամրապնդվում է Հյուսիսային Արցախի պաշտպանությունը, որի կենտրոնը, թեքես, Գյուլիստանի հանրահայտ բերդն էր: Այն կառուցված է մի անմատչելի ժայռի վրա, որին հնարավոր է մոտենալ միայն մի նեղ արահետով: Լեռնային գետակը երեք կողմից շրջանցում է բերդը, որի կենտրոնից մինչեւ ձորը՝ գետափ, կառուցված է ստորգետնյա գաղտնի ճանապարհ՝ ֆարե աստիճաններով: Նույնիսկ ամենամատչելի հատվածում, շուրջ 70-80 մետր բարձրություն ունեցող համարյա ուղղահայաց ժայռի երկայնքով բարձր պարիսպ է կառուցված, կան աշտարակներ:

Պահպանվել են երկրամասի ամուր ինքնապաշտպանության նյութերն էլ շատ վկայություններ: Գյուլիստան գյուղի մոտ, Յամաֆ ձոր կոչվող վայրում, որտեղ նկատելի են երբեմնի առվի հետքեր, ամբողջ լանջերին փռված են մետաղական խարամի մնացորդներ,² որին տեղացիները երկաթի կեղտ են անվանում: Յամաֆ ձորից ոչ հեռու, Հացուտ կոչվող վայրում, մետաղամշակության ուշագրավ օջախ կա: Այստեղ կողկողֆի հինգ խոշոր ֆարեր կան, որոնց վրա փորված են տարբեր չափերի ու ձևերի (շրջանաձև, եռանկյունաձև, ֆուսկուսի) տարբեր խորության փոսեր, առվակներ (5 սմ,

1 Այդ մասին տես սույն գրքի «Հավելվածը»:

2 Դժվար է ստույգ իմանալ, թե ինչ մետաղ են ստացել այստեղ, բայց ՀՆԱՀ ԳԱ երկրաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող Գ. Մեծումյանի ջանքերով ստացվել է խարամի մի բեկորի սպեկտրալ անալիզը: Նրանում մետաղական էլեմենտներից գերակշռում են ալյումինը (4,2%), տիտանը (4,2%), երկաթը (2,4%): Սիլիցիումի պարունակությունը 7,5% է:

8-10 սմ, մինչեւ 15 սմ խորությամբ): Ենթադրվում է, որ այս ֆարերը հանձնառուի հարստացման հարմարանքներ են եղել: Հնավայրը գտնվում է մի ժայռի մոտ, որին մինչեւ հիմա էլ «Հանք» են ասում:

Վերջին տարիներին մետաղամշակության մեկ այլ օջախ է բացահայտվել Բուզուլի գյուղի մոտ: Գտնվել են բավական լավ մշակված պղնձե մեծաթիվ իրեր: Մի ֆանիսի վրա, որ մեր ձեռքի տակ են, կա պատրաստող վարպետի անունը («Վարթանի որդի Սարֆիս»), որից կարելի է ենթադրել, որ պղնձե իրերի արտադրությունն այստեղ տեղական բնույթ է ունեցել:

Գետաշենից ոչ հեռու, Զրաղիձորում, մինչեւ վերջին ժամանակները ծծումբ էին ստանում: Լեռնաշխարհը հարուստ է կավի ու կրի պաշարներով, կա գիպսի հանք՝ Վերին Շենում ու Մնաշենում, կան արծեֆալոր շատ ծառատեսակներ: Հնուց ի վեր տեղում ստացել ու օգտագործել են երկաթ, պղինձ, վառոդ, փայտի անուխ (աղբյուրների վկայությամբ կա նաեւ ֆարաձուխ):

Ներկայիս Շահումյանի շրջանում, դաշտային ու նախալեռնային մասերի սահմանագծի երկայնքով, կան բազմաթիվ հին շինության հետքեր, գեղեցիկ խաչքարերով սրբավայրեր, որոնք մի պաշտպանական գիծ են հիշեցնում: Դրանք հիմնականում հայտնի են «Նահատակ» անունով: Ավանդության համաձայն՝ լեզգիների դեմ մղված կռիվներում այստեղ նահատակվել են երկրամասի երիտասարդ պաշտպաններ, որոնց գերեզմանները սրբատեղի են դարձել: Ուշագրավ է, որ պաշտպանական այդ գծի վրա, Ներքին Շենի ու Պարիսի սահմաններում, մի բլրի վրա հին շինության հետքեր կան: Բլուրը կոչվում է «Սինգյառին յալ»։ սանգյառը խրամատ, պաշտպանվելու տեղ է նշանակում, «յալը»՝ բլուր: Ինքնին հասկանալի է, որ այդտեղ պաշտպանական ինչ-որ կառույց է եղել:

Հյուսիսային Արցախի բազմաթիվ հնավայրեր կարող են գիտական հանգամանալից հետազոտության: Օր-օրի դրանք ֆալթայվում են մոռացության գիրկն են տանում լեռնաշխարհի անցյալի շատ վկայություններ: Ուսումնասիրության կարող են նաեւ այս հողի վրա ստեղծված կամ նրան վերաբերող մատենագրական տվյալները: Մեզ հաջողվել է ուսումնասիրել Մատենադարանում եւ մասնավոր տներում պահպանվող այդպիսի նյութեր: Առանձնապես արժեքավոր է Գյուլիստանում Մամուշ մայրիկի մոտ պահպանվող Ավետարանը, որը տեղացիներն անվանում են Ծեր Ավետարան:

1930-40-ական թվականներին, երբ ավերվեցին շատ եկեղեցիներ, պղծվեցին սրբություններ, մատյաններն էլ անհետացան: Հույս ունենի՞մ դրանցից շատերը պահվում են առանձին մարդկանց մոտ եւ մի օր ի հայտ կգան: Այդ տարիներին Մամուշ մայրիկը կարողացավ մուրության մեջ գցել Բաֆվից ժամանած իշխանության ներկայացուցչին՝ Ավետարանի փոխարեն հանձնելով միայն արծաթե կազմը եւ ստանալ Ավետարանը հանձնելու մասին տեղեկանք: Իսկ հետագայում էլ այդ տեղեկանքով նա կարողացավ մատյանը փրկել տեղական իշխանություններից: Ծեր Ավետարանը որեւէ հիշատակարան չունի (գուցե անհետացել է կազմի հետ. նրա վերջին թերթերը պակասում են), սակայն հիացմունք են պատճառում բարձր վարպետությամբ կատարված նրբին մանրանկարները:

Որոշակի արժեք է ներկայացնում նաև նույն գյուղում, Նաղեժդա Մակյանի մոտ պահպանվող հմայիրը: Դա մագաղաթի մի երկար ծապավեն է, որ պահվում է կլոր փաթաթված եւ պարունակում է զանազան հմայություններ:

Հյուսիսային Արցախի կյանքն ուսումնասիրելու ուղղությամբ դեռեւս անցյալ դարի վերջին տասնամյակներում շնորհակալ աշխատանք է կատարել Մակար Բարխուդարյանը (Մակար Եպիսկոպոս Բարխուտարյան): Նա շրջել է գյուղերում, ուսումնասիրել պատմաճարտարապետական անթիվ հուշարձաններ ու ձեռագիր մատյաններ, գրի առել պատմական գրույցներ, ավանդություններ, վիճակագրական տեղեկություններ եւ այլ նյութեր: Մոտավորապես նույն ժամանակներում այդ բնույթի արժեքավոր աշխատանք է կատարել Երվանդ Լալայանը:² Հյուսիսային Արցախի մելիֆական տոհմի պատմությունն ուսումնասիրել են Բաֆֆին³, Լեոն⁴:

Արցախի մելիֆությունների պատմությունն ուսումնասիրել է Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը՝ հրապարակելով երկու արժեքավոր պրակներ⁵: Ուշագրավ նյութեր են պարունակում մատենադարանի առանձին ձեռագրեր (հ.1032, հ.9043, հ.4463 եւ այլն), «Դիվան հայոց պատմության» ժողովածուները⁶, ինչպես եւ ցարական իշխանությունների կողմից հրատարակված փաստաթղթերի, վիճակագրական տեղեկությունների եւ բազմազան այլ ժողովածուներ: Մեր ժամանակներում մելիֆությունների պատմության առանձին հարցերի անդրադարձել են Ա.Ռ.Հովհաննիսյանը⁷, Պ.Հարությունյանը⁸, Բ.Ա.Սևուբաբյանը⁹, Ֆ.Պողոսյանը¹⁰ եւ ուրիշներ, որոնց աշխատությունների մեջ այս կամ այն չափով շոշափվել են նաև Գյուլիստանի մելիֆությունները վերաբերող խնդիրներ: Սակայն լեռնաշխարհի պատմական անցյալին վերաբերող բազմաթիվ հարցեր մինչև է հիմա դուրս են մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Վերջին տարիներին միայն նկատելի է որոշ գիտական հետաքրքրություն Հյուսիսային Արցախի նկատմամբ: Ուշագրավ ուսումնասիրություններ են հրապարակել երիտասարդ հետա-

գոտողներ Սամվել Կարապետյանը,¹ Մանվել Սարգսյանը,² Արտակ Ղուլյանը³: Շահումյանի շրջանային «Նոր ուղի» թերթում 1989-1990 թվականներին հետաքրքիր ուսումնասիրություններ է հրապարակել Գյուլիստան գյուղի դպրոցի պատմության ուսուցիչ Բենիկ Ղուլյանը⁴:

Այնուամենայնիվ, չի ստեղծվել Հյուսիսային Արցախի ամբողջական պատմությունը, որի անհրաժեշտությունը, կարծում ենք, այսօր առավել ֆան երբեք է, հրատապ է: Այդ փոքրիկ լեռնաշխարհը հայ ժողովրդի այն հատվածն է կազմում, որի ճակատագրի մեջ, ասես կիզակետում, արտացոլված են մեր անցյալի ու ներկայի հանգուցային ու բնութագրական շատ խնդիրներ:

Հյուսիսային Արցախում ձեւավորված մելիֆությունը հայտնի է հիմնականում Գյուլիստանի անունով: Այդ գյուղը մելիֆանիստ էր, այստեղ են գտնվում բերդը, մելիֆների տոհմական գերեզմանոցը:

Տեղին է հիշել, որ սա հին ձեռագրերից հայտնի վարդուտ⁵ գյուղն է, որը հետագայում պարսկերենի ազդեցության տակ դարձել է Գյուլիստան: Պարսկերենի ազդեցությամբ հայերեն անվանումների թարգմանական կամ հնչյունափոխված գործածությունն այն ժամանակներում սովորական էր դարձել: Այդպես Տրտու գետը, որ տրտինգ բառից է (տրտինգ տվող)՝ ջրերի խենթ ու կատաղի հոսքի, վարարումների պատճառով, դարձել է Թարթառ: Երբեմնի Ալիարակ լեռը, որ հետագայում այնտեղ բնակվող Կեփաս ճգնավորի անունով էր սկսել կոչվել, հնչյունափոխվել, դարձել է Բյափազ: 1139 թ. սաստիկ երկրաշարժից փլվում է այդ լեռը, փակում ձորը, որտեղ գոյանում է գեղատեսիլ ու ձկնառատ Աբիարակ լիճը, որի անունը հետագայում դարձել է Գյոզ-գյոլ՝ «երկնագույն լճակ» (ի դեպ, ինչպես տեղեկացնում է Կիրակոս Գանձակեցին, այդ երկրաշարժից կործանվեց Գանձակը, իսկ վրաց Դեմետրե թագավորը եկավ ու ֆաղափ դարպասները տարավ իր երկիրը):

Հայերեն անունների այդ կարգի խեղաթյուրումների մասին դեռեւս 18-րդ դարում գրել է Եսայի Հասան-Ջալալյանց պատմիչ-կաթողիկոսը⁶:

1 Տես՝ նրա նշվ. աշխ.:

2 Քետաշեն (ժողովրդական ճարտարապետություն), «Կուլտուր-լուսավորական աշխատանք» հանդես, Երեւան, 1988, հ.2:

3 Արցախի պատմական ճարտարապետության երկու հուշարձան. «Լրաբեր», 1982, հ.10, Արցախի իշխանական ապարանները. «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1988, հ.3-4:

4 Արցախը մեր հիմնավորը բնորոշում է Շահումյանի շրջանային «Նոր ուղի» թերթ, 1989 թ., դեկտեմբերի 5-ի, 7-ի, 12-ի, 14-ի համարները եւ ուրիշներ:

5 Ժժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Գ մաս (1481-1500), Երեւան, 1967, էջ 446. «ի գեղս որ կոչի Գուլիստան, որ է վարդուտ»:

6 Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, յօրինեալ ի տ. Եսայի Աղուանից կաթողիկոսէ Հասան Ջալալեանց, Յերուսաղեմ, 1868 թ. էջ 42: Պատմիչն ի նշ իմանար, որ իրենից շուրջ երկուսուկես դար հետո կհայտնվի ոմն Բունիաթով եւ կխեղաթյուրի ոչ միայն հայերեն անունները, այլևս հայ պատմիչ-կաթողիկոսի ազգային պատկանությունը՝ այն հարմարեցնելով իր ցեղակիցների զավթողական ֆաղափականությանը: Այդ մասին տես Բագրատ Ուլու-

1 Տես՝ նրա «Աղվանից երկիր եւ դրացիք», Թիֆլիս, 1893, «Արցախ», Բագու, 1895:

2 Տես՝ Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1899, հ.1, «Գանձակի գավառ» բաժինը:

3 Բաֆֆի, Խամսայի մելիֆություններ, Երկեր, հատոր 10, Երեւան, 1964.

4 Լեո, հատոր 3, Երեւան, 1946, էջ 749-750:

5 Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյան, Նյութեր հայ մելիֆության մասին, պրակ Ա, Վաղարշապատ, 1913, պրակ Բ, էջմիածին, 1914:

6 Գիտ Բահանայ Աղանեանց, Դիւան հայոց պատմութեան, գիրք Ա-Բ, Թիֆլիս, 1893, գիրք Գ, Թիֆլիս, 1894:

7 A. P. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1974; Иосиф Эмин, Ереван, 1945.

8 П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в., Москва, 1954.

9 Տես՝ Բ.Ա.Սևուբաբյան, Նշված աշխատությունները, նաև՝ նույնի Գանձասար, Երեւան, 1981:

10 Ֆ.Պողոսյան, Խամսայի մելիֆների իրավունքներն ու պարտականությունները, Բանբեր Հայաստանի արխիվների, 1966, հ.1, էջ 197-208:

Մելիֆուքյունը կոչվել է նաև Թալիշ գյուղի անունով, որի մոտ գտնվող Հոնեկ վայրում մինչև հիմա էլ կիսով չափ կանգուն է մելիֆների ապարանք, որից էլ ոչ հեռու նրանց տոհմական գերեզմանոցն է: 15-16-րդ դարերում Հյուսիսային Արցախի կապակցությամբ հանդիպում են Հերգա գավառ, իսկ ավելի հաճախ պարզապես «Պարտավի երկիր» անվանումները: 1417 թ. մի հիշատակարանի մեջ պատվիրատուն նշվում է՝ «Ի Հերգա գավառէ, ի նահանգէ Առանա, ի քաղաքէ Բարտուա, ի գեղջէ, որ կոչի Պարիս»¹: Այդպիսի անվանում հանդիպում է նաև 1691 թ. մի փաստաթղթի մեջ: Գանձասարի Երեմիա կաթողիկոսին հակառակ երիցմանկաց վանճում հանդես էր եկել Սիմեոն կաթողիկոսը: Վերջինիս դատապարտելու եւ մերժելու նպատակով 1691 թ. հրավիրվում է երկրամասի մեծ ու փոքր իշխանավորների, ճանաչված այլ մարդկանց ժողով: Վաթսուհինգ ստորագրությունների մեջ, ամենապատվավոր տեղերից մեկում, կարդում ենք՝ «Ես Մելիֆ Թուրշիս Պարտու դապուլ արի ու միբեցի» (այսինքն՝ իր համաձայնությունն է տվել ու կնքել): Ուշագրավ է, որ Հյուսիսային Արցախի տիրոջ հետ մեկտեղ ժողովին մասնակցել ու ստորագրել է նաև Գետաշենի տանուտերը («Ես Բամալ պէկ տանուտէր Գետաշենու դապուլ արի») ²:

Ներսես կաթողիկոսի 1723 թ. մի նամակում Գյուլիստանի մելիֆ Եսային նշված է «Պարտավա երկրէն»³: Նույն մելիֆը այդ թվականի մի այլ գրության մեջ ինքն իրեն համարում է «Ի երկրէն Պարդայու, ի գեղէն, որ եւ կոչի Գուլստան»⁴:

Հերգա գավառի անվանումը պարզորոշ վկայում է, որ մելիֆության ձեւավորումից առաջ լեռնաշխարհը այդպիսի վարչական միավոր է կազմել (դժվարանում ենք նույնացնել Հերգա անունը Հաթերֆի հետ): Պարտավի հիշատակումը բնական է թվում: Հայտնի է, որ այդ քաղաքը կառուցվել է 5-րդ դարի 2-րդ կեսին եւ պարսից մարզպանի նստավայրն է եղել: Շատ ավելի ուշ շրջանում (երբ Արցախ աշխարհը պարսկական բեկլերբեկություն էր հանդիսանում), Պարտավը Գանձակի հետ միասին պարսից բեկլերբեկի նստավայրն էր: Հովհաննիսի վարդապետը 1579 թ. Դաղստանից դեպի Գանձակի կողմերը եւ Արցախ աշխարհի կատարված ասպատակության մասին գրելով, տեղեկացնում է՝ «գիշխանն Գանձայոյ եւ Պարտավոյ փախստական արարին»⁵: Այստեղ պարզ երեւում է, որ Գանձակն ու Պարտավը միեւնույն իշխանի նստավայրն են եղել: Մելիֆության ձեւավորումից հետո Պարտավը վարչական առնչություն չի ունեցել Հյուսիսային Արցախի հետ, ուստի եւ հիշատակվել է ընդհանուր ձեւով՝ առանց վարչական կոնկրետ իմաստի:

¹ Բաբյան, «Ասպատակ. դարձյալ տիրահռչակ Ջիյա Բունիաթովը», «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 30 նոյեմբերի, 1989 թ.

² Ժեղաթի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ.Ս.Նաչիկյան, մասն առաջին (1401-1450), Երեւան, 1955 թ., էջ 205:

³ Դիվան կաթողիկոսական, Երեւանի Մատենադարան, թրքապանակ 1, վավերագիր 40:

⁴ Армяно-русские отношения в первой трети XVIII в.. Сборник документов под ред. Ашота Иоаннисяна, том II, часть II, Ереван, 1967, с. 27.

⁵ Նույն տեղում, էջ 28-29:

⁶ Սամուէլի Բահանյի Անեցոյ, նշվ. աշխ., էջ 189:

Հյուսիսային Արցախի կապակցությամբ առանձին դեպքերում գործածվել է «Իգիր-միդորթ» (Բանջորս) անվանում՝ առաջ բերելով թյուրիմացություն: Նույնիսկ ենթադրվել է, թե այդպիսի անվանում տրվել է 24 գյուղ ունենալու պատճառով¹: Սակայն որեւէ տեղից գյուղերի այդպիսի կազմ հայտնի չէ: «Իգիրմիդորթ» թուրքմենական ցեղի անուն է, ինչպես «Օթուզիֆին» (երեսուներկու), Բայաթը, Ջիվանջիրը եւ այլն: Իգիրմիդորթ անունով վարչական միավոր՝ առանձին մահալ, հայտնի է, բայց արդեն շատ ուշ՝ ռուսական տիրապետության շրջանում: Այդպիսի մահալ տեղծվել է 1823 թ., Հյուսիսային Արցախի ցածրադիր գոտում, այն էլ ունեցել է ոչ թե Բանջորս, այլ ընդամենը ութ գյուղ՝ Հասանդայա, Սարապ, Դիվանլի, Մուլլավաթլի, Բորսունլու, Ջեյվալի, Սաթլի, Ջյումյուրխաչ, որոնցից առաջինը հայկական էր, մյուսները՝ թաթարական², վերջինը՝ խառը բնակչությամբ³:

Իգիրմիդորթ անունով հայտնի է նաև հայկական գյուղ՝ Գանձակի մերձակայքում: 1804 թ. այն ունեցել է 28 ծուխ՝ 230 շնչով (130 արական, 100 իգական): Գյուղի տնտեսության մեջ հաշվվում էր 18 ձի, 3 խոշոր եղջերավոր անասուն, 34 այծ ու ոչ-խար, 9 այգի: Գյուղը հարկատու էր Գանձակի խանին⁴: Դժվար է ասել, թե ինչու է հայկական այս գյուղին տրվել «Իգիրմիդորթ» անունը, բայց, հնարավոր է, հենց նրա անվան պատճառով հայկական այս գյուղի կողմերից մինչեւ Մուսալ ու Ալիարակ լեռների լանջերը փոխված Հյուսիսային Արցախի հայկական գյուղերի խումբը ստացել է նաև այդպիսի անուն:

Գյուլիստանի մելիֆության տարածքը Մուսալի ու Ալիարակի (Քյափազ) հյուսիսային լանջերից հասնում էր Գանձակի հարավային կողմերն ու Գյոթանի սահմանները: Մե-

¹ Ի Բաֆֆի, հատոր 8, Երեւան, 1957, էջ 581, Ե.Լալայան, Ազգագրական հանդես, Ե գիրք, Թիֆլիս, 1899, հ.1, էջ 329-335:

² Ներկայիս Ադրբեջանի տարածքի մուսուլմանական բնակչությունը մինչև 1920-ական թվականները պաշտոնական արդյունքներում եւ գրականության մեջ հիմնականում կոչվում էր «թաթար» ընդհանուր անվանումով: Խորհրդային կարգերից հետո՝ «ադրբեջանական թուրքեր» եւ այլն (Большая Советская Энциклопедия, том I, Москва, 1926, с. 641):

³ 1930-ական թվականներից հետո սկսեցին կոչել «ադրբեջանցի», բայց առօրյայում մինչև հիմա էլ նրանք իրենց անվանում են պարզապես «մուսուլման»: Վերջին տարիներին հանդիպում են նաև «ազերիներ» եւ «ազերի թուրքեր» անվանումները: Բնութագրական է, որ «ադրբեջանցի» անվանման մեջ վերջին տասնամյակներում պաշտոնապես մտցվում (այլ կերպ՝ ձուլվում) են նաև Բրդերը, Թալիշները եւ այդ հավաստի մյուս ազգային փոքրամասնությունները: Ի դեպ, այդպիսի ձուլման պրոցեսը Խորհրդային մեծ հանրագիտարանը նշում է սկսած 1920-ական թվականներից (БСЭ, том I, 1926, с. 641): Հանգամանորեն՝ (Варта Грмгорян, Насильственная ассимиляция мусульманских национальных меньшинств в Азербайджане, Ереван, 1992.)

⁴ Описание Карабагской провинции действительного статского советника Магилевского и полковника Ермолова 2-го, апреля 17 дня 1823 года, в кр. Шуше, док. No 18, թերթ 177, առանց էջավանդան (Тифлис, 1866).

⁵ Акты, собранные Кавказской археографической комиссией, под ред. Ад. Берже, том 2, Тифлис, 1868, с. 596.

լիբուսյան հզորության շրջանում, 1724 թվականին, Աբրահամ Յուզբաշին նշվում է որպես «Բարդոյ եւ Քօլանու եւ Գանջոյ բասանու» տեր:¹ Իսկ լեզգիների 1781 թ. ասպատակության ժամանակ Գյուլիստանի երիտասարդ մելիք Բեգլարը թշնամուն ջարդ է տալիս եւ ետ շարտում իր սահմաններից հենց Գյոյրանի կողմերում (ավա ~ դ, ինճն էլ գոհվում է այդ կովում):

Գյուլիստանի մելիքության հիմնադրման հանգամանքների եւ մելիքական տոհմի պատմությունը ժողովրդական գրույցի ձեւով պահպանվել, գրի է առնվել եւ համարյա անփոփոխ կրկնվել տարբեր հեղինակների կողմից²: Մելիքության հիմնադիր համարվում է Կարա յուզբաշի Աբովը, որը վախճանվել է 1632 թ., եւ գերեզմանը գտնվում է Թալիշ գյուղից ոչ հեռու, Հոռեկի վանքի մոտ³:

Որոշ թյուրիմացություն գոյություն ունի այս Աբովի անվան հետ կապված: Պատմվում է, որ նա վիթխարի ուժի տեր է եղել ու հաղթանդամ, միայնակ ձերբակալել է մի խումբ ավազակների եւ Պարտավի խանի, ավելի ճիշտ՝ պարսիկ կառավարիչի (բեկլերբեկի) կողմից արժանացել պարգեւի: Ոչ մի ակնարկ չկա նրա մաշկի գույնի մասին, ուստի պետք է ենթադրել, որ նրան Կարա են անվանել ոչ թե սեւ լինելու, այլ վիթխարի ուժի տեր, հաղթանդամ լինելու պատճառով, քանի որ «կարան» ոչ միայն սեւ, այլեւ մեծ, խոշոր է նշանակում: Հետեւապես, Կարա Աբովին Սեւ Աբով ասելը, ինչպես հանդիպում է համարյա բոլոր հեղինակների մոտ, թյուրիմացություն է:

Ուսումնասիրությունների մեջ անորոշություն կա այն հարցում, թե ծագումով որտեղից է այս տոհմը: Կարա յուզբաշի Աբովը, ըստ որոշ հետազոտողների, սերվում է Դոփյանների Ծարի իշխանական տնից⁴: Այդ տոհմի իշխանությունը տարածվում էր Սեւանի արեւելյան ափերից մինչեւ Թարթառ գետը՝ ներառելով Կուր գետի ձախ ափին գտնվող հին հայկական շրջանները: Ավանդության համաձայն, հենց այդ շրջաններից՝ Նիժից է եկել Աբովը՝ յոթ ընտանիքի հետ: Բաֆթու համար պարզ չեն եղել այդ տեղափոխության հանգամանքները, իսկ Ե.Լալայանը կասկած է հայտնում՝ Աբովը բնիկ նիժեցի⁵ է եղել, թե՛ լեզգիների արշավանքների պատճառով հայտնվել է այն կողմերում⁵:

Պահպանվել են նյութեր, որոնք հուշում են որոշակի առնչություն Հյուսիսային Արցախի եւ Կուրի ձախափնյա հայկական շրջանների միջեւ: Կուրի ձախ ափին, Նիժի կողմերում 1434 թվականից հայտնի է Սոկուբլու հայկական գյուղը: Համոզիչ է թվում հետազոտող Սամվել Կարապետյանի ենթադրությունը, թե այդ անունը, որ հայերեն

նշանակում է Ուռուտ, պարզապես հայերենից թարգմանվել է թուրքերեն:¹ Այն ժամանակների համար, ինչպես արդեն ասվել է, դա սովորական երեւույթ էր: Կարա յուզբաշի Աբովն այդ կողմերից տեղափոխվելով, հաստատվել է Հոռեկի կողմերում. Հոռեկը (Հոռեք) տեղի բարբառով հենց ուռիներ (ուռուտ) է նշանակում. իսկ այս Ուռուտը (Հոռեկը), ինչպես արդեն ասվել է, շատ ավելի հին է, թերեւս 5-րդ դարից (Ուռեկան): Հնարավոր է, որ անբարենպաստ հանգամանքների պատճառով, այստեղից գաղթ լինի կատարված դեպի Կուրի ձախ ափը, իսկ 16-րդ դարի վերջերին, երբ լեզգիների հանախակի ասպատակությունների հետեւանում կյանքն այնտեղ անապահով էր դարձել, որոշ ընտանիքներ վերադարձած լինեին պապեմական հայրենիք: Այդպիսի գաղթն ու վերադարձը նույնպես այն աղետալի ժամանակներում սովորական են եղել:²

Ավանդության համաձայն Աբովը Բարդախի խանից ստացել է Թալիշ գյուղը՝ Հոռեկի վանքի մոտ: Այդ վանքի մոտ էլ հենց նրանց տոհմական գերեզմանոցն է: Այս վանքից ոչ շատ հեռու, Ինջի գետի մոտ, մի անտառածածկ լանջի վրա, Շահունյանի շրջանի Զաֆին նահատակ կոչվող վայրում, վերջերս մեզ հաջողվեց ծանոթանալ մի հին բնակավայրի:³ Լավ պահպանված եւ բավական շեղ երկու գերեզմանաբարերի վրա հաջողվեց կարդալ՝

1. ԱՅՍ Ե ՏԱՊԱՆ Բ //ԱՇԻՆՃԱՂԵՑԻ/ՄԱՉԱՍՈՒՐԻ ՈՐԴԻ //ՀՈՎՀԱՆԵՍԻ/ՊՃԳԳ/թՎԻՆ (1744 թ.)
2. ԱՅՍ Ե ՏԱՊԱՆԸ ԲԱՇԻՆՃԱՂԵՑԻ... ՊԵՏՐՈՍԻ ՈՃԳԳ ԹՎԻՆ:

Ցավոք, շրջանում ստեղծված բարդ իրադրության պատճառով չկարողացանք անգամանորեն ուսումնասիրել հնավայրում սփռված հիշատակները, որոնցից շատերի վրա գրեր կան: Այնուամենայնիվ, այս երկու արձանագրությունները ուշագրավ տեղեկություն են պարունակում: Տապանագրի մեջ Բաշնեաղեցի նշելը վկայում է, որ նրանք տեղացի չեն եղել, այլ՝ եկվորներ: Բաշնեաղ (Պաշնեաղ) անունով հայկական գյուղատեղ, եկեղեցու եւ գերեզմանատան ավերակներով, գտնվում է Շաֆիի շրջանում⁴, Կուր գետի ձախ ափին: Կան փաստեր, որ այդ գյուղի բնակիչների մի մասը խաչենից ու Ջրաբերդից գաղթածներ են եղել⁵: Կարծում ենք Զաֆին Նահատակը հենց այն բնա-

1 Армяно-русские отношения в первой трети XVIII в., том II, ч. II, с. 78.
2 Տե՛ս՝ Մատենադարանի ձեռագիր հ.4463, Բաֆթի, Խամսայի մելիքություններ, Երկեր, Ե.Լալայան, Գանձակի գավառ, Լեռ, հատոր 3:
3 Ե.Լալայան, նշվ. աշխ., էջ 220:
4 Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան, Նյութեր հայ մելիքության մասին, Բ պրակ, էջ 108-116:
5 Բաֆթի, նշվ. աշխ., էջ 164-165, Ե.Լալայան, նշվ. աշխ., էջ 219:

1 Սամվել Կարապետյան, «Պատմական Սոկուբլու գյուղը եւ նրա հուշարձանները». «Բանբեր Երեւանի համալսարանի», 1988, հ.3, էջ 106:
2 Տե՛ս Մակար Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 219-220:
3 Այս հնավայրի մասին հիշատակություն ունի Մակար Բարխուտարեանցը («Արցախ», էջ 243), սակայն նրան անհայտ են մնացել այստեղ պահպանված գրավոր հիշատակները:
4 Սամվել Կարապետյան, Պատմական Խոջկաշենը եւ նրա հուշարձանները. «Լրաբեր», 1985, հ.10, էջ 79, ծան.10:
5 Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 261:

կավայրն է, որտեղ հաստատվել է Կարա յուզբաշի Աբովը՝ իր հետ բերած մի քանի ընտանիքներով:

Նոր տեղում, մանավանդ փոքրաթիվ հպատակներով, Աբովը, բնակամարտ, չէր կարող միանգամից հասնել շատ թե ֆիչ ազդեցիկ դիրքի: Սակայն դա լեռնաշխարհի համար ճակատագրական մի ժամանակաշրջան էր, երբ կազմավորվում էր միասնական ռազմա-ֆաղափական ուժ՝ լեզգիների ավերիչ ասպատակությունների և այլ զավթիչների դեմ: Փաստերը վկայում են, որ այդ բարդ շրջանում Աբովն իր ուժերով, ինչպես և նրա հաջորդները, միացած են եղել հայրենի հողի մյուս պաշտպաններին, համատեղ կռվել օտար ուժերի դեմ: Տեղի բնակչությունը նրանց շիրվանցի էր անվանում (ակ-նարկելով Շիրվանի կողմերից գաղթած լինելը): 1720-ական թվականների ազատագրական պայքարի բուռն շրջանում հաճախ է դժվարին կացություն ստեղծվել՝ ռուսական և թուրք-պարսկական անառնողների բախվող շահերի միջև կողմնորոշվելու հարցում: Եւ դրա հետ կապված հաճախ են ծնվել ներքին հակասություններ տեղի ազդեցիկ տարբեր ուժերի միջև: Այդպիսի առիթներով մարդիկ միշտ հիշել են, որ այսպես կոչված «շիրվանցիներն» օգնել, մյուսների հետ համատեղ հանդես են եկել թշնամու դեմ մղվող կռիվներում:¹

Պատմվում է, որ Աբովին հաջորդել է Մելիք Յավրին: Ե. Լալայանը գրել է, թե «Թալիչ գյուղի Ավետարանի հիշատակարանում ասված է, որ 1650 թ. Թախիչ (Թալիչ) գյուղում իշխան է եղել Սեւ Աբովի որդի Եսարին»:² Պատմվում է, որ մելիք Յավրինն հաջորդել է «մելիք Բեկարը, որ ֆաշ և խելացի անձնավորություն է եղել: Սա խլում է այս կողմերի հին տիրապետող Աբրահամ յուզբաշուց (Իբրահիմ-գյավուր) մի քանի գյուղեր, ինչպես՝ Վերին Շենը, Ներքին Շենը, Էրֆեջը և այլն: Նա տիրում է նաև Գյուլիստանի բերդին, վերանորոգում է և յուր բնակությունն այնտեղ հաստատում»:³

Այստեղ, կարծում ենք, թույլ է տրված բացահայտ անհշտություն: Աբրահամ յուզբաշին, կոչված նաև Աբրահամ սպարապետ (թուրքերի կողմից՝ գյավուր Աբրահամ), 1720-ական թվականների հայ ազատագրական շարժման ակնառու դեմքերից է եղել: Նրա մասին պահպանվել են մեծաթիվ փաստաթղթեր, որոնցից հառնում է հայրենի հողի մի համարձակ ու զորեղ պաշտպանի կերպար: Նա լրջորեն անհանգստացրել էր նաև թուրքական սուլթանին: Նրա հետ հաշվի էին նստում թե Արցախի աշխարհիկ ու հոգեւոր իշխանավորները, թե ռուսական իշխանությունները:

1 Армяно-русские отношения в первой трети XVIII в., том II, ч. II, с. 187.

2 Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 220:

3 Նույն տեղում: Տոհմի ժառանգներին այս նույն կերպով են հիշատակում բոլոր հեղինակները, բացի Պ. Հարությունյանից, որի կարծիքով Կարա յուզբաշի Աբովին հաջորդում է «նրա որդին՝ մելիք Բեկարը» (Պ. Տ. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, Москва, 1954, с. 61), որը, կարծում ենք, վրիպում է: Համոզիչ է թվում Պ. Հարությունյանի կարծիքը այն մասին, որ այդ ավանդություններին հավատալ չի կարելի, որ մելիք-Բեկարյանների մասին հավաստի տեղեկություններ կան միայն 18-րդ դարի 2-րդ կեսից (տես նրա նշվ. աշխ., էջ 61):

Աբրահամ յուզբաշու ազդեցությունը տարածվել է ոչ միայն Գյուլիստանի մելիքության, այլև նաև շրջակայքի վրա: Ընդ որում, եթե այլ մելիքություններում հաճախ հիշատակվում էին մի շարք իշխանավորներ (օրինակ՝ «Աբրիսու, Եսայիս, Ալլահվերդիս, Ներսես, Վանիս Զարաբերտու»), ապա Աբրահամ սպարապետը հաճախ միայն ինքն էր հիշատակվում, այն էլ՝ որպես ավելի լայն տարածքների տեր՝ «Աբրահամս Բարդոյ և Քոլանու և Գանջոյ բասանու»:¹ Մահից հետո էլ փառահեղ հուշարձան է կանգնեցվել նրա գերեզմանին՝ հենց Գյուլիստանում: Նրանից հետո էլ Գյուլիստանում իշխել է նրա որդին՝ Հակոբսը: Որդուն հաջորդել է թուրք շաքար յուզբաշին, որի ֆաշ-գործությունների մասին գյուղում մինչև երբևէ հիմա էլ չեն մարել գրույցները:

Ակնհայտ է, որ Աբրահամ յուզբաշուց ոչ միայն մելիք Բեկարը, այլև մեկ ուրիշը ոչինչ չէր կարող խլած լինել: Աբրահամ յուզբաշին ու Աբովի թու մելիք Բեկարը չեն համընկնում նաև իրենց գործունեության ժամանակներով: Եթե 1650 թ. Թալիչում տեր էր Յավրին, սրան հաջորդել է որդին՝ մելիք Բեկարը, այս վերջինս հազիվ շում կարող էր առնչություն ունենալ 1720-30-ական թվականներին աչքի ընկած Աբրահամի հետ: Այս Աբրահամի գործունեության ժամանակներից պահպանվել են պաշտոնական բազմաթիվ փաստաթղթեր ու գրություններ, որոնցից ոչ մեկի մեջ չկա Բեկարի անունը: Աբովն էլ հիշատակված է 1725 թ. մարտի 10-ին կազմված մի գրության մեջ. ստորագրությունների շարքում կա նաև նրա կնիքը՝ «Քի ծո Ապով»: Մեկ այլ առիթով, 1726 թ. նոյեմբերի 25-ի մի նամակի մեջ, յուզբաշիների ու մելիքների շարքում հիշվում է «Ապով»՝ առանց որեւէ կոչման կամ պատվանունի:² Բեկար անունով մելիք հայտնի է ավելի ուշ՝ 1751 թ. մի արձանագրության մեջ: Հոռեկի³ եկեղեցու գլխավոր մուտքից ձախ, շատ հասարակ ու պարզ մի գերեզմանաճարի վրա գրված է՝

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԻՍԱՅՄԱՆԱՂԻՆ

ՍԱ ԷՐ ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ՊԵԿԱՐԻՆ ԹՎ ՈՍ:

Այս վկայությունը հաստատվում է դրանից ֆիչ հեռու գտնվող մեկ այլ գերեզմանաճարի արձանագրությամբ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ /ՄԱՐԵԱՆԻՆ ՈՐ Է// ԿՈՂԱԿԻՑ ԻՍԱ//

ՆԱՆ... ՄԵԼԻՔ//.....//:

Այսօրից հետեւում է, որ մելիք Բեկարի մասին բերված գրույցը չի համապատասխանում պատմական իրականությանը: Զրույցի մեջ Աբրահամին տեղի հին տիրապետող համարելն իսկ վկայում է, որ Բեկարը 1730-ական թվականներից հետո միայն կարող էր հանդես գալ: Ուրեմն 1720-ական թվականներին մի քանի առիթով հիշատակված Աբովի որդին է եղել: 1751 թ. Հոռեկի եկեղեցու մոտ թաղված Իսայիսի աղա-յի հայրը: Պահպանված վավերական նյութերի մեջ Աբովը հիշատակված է առանց որեւէ պատվանունի կամ կոչման: Մելիք Բեկարն էլ հիշատակված է որդու անունով

1 Армяно-русские отношения в первой трети XVIII в., том II, ч. II, с. 78.

2 Նույն տեղում, էջ 234:

3 Մոսկվաբնակ երիտասարդ Սերգեյ Աբովյանը նորոգյա ծանր ժամանակներում Հոռեկում պեղել է արժեքավոր նյութեր՝ կապված սույն հարցի հետ, բայց դեռ չի հրատարակել:

գերեզմանաբարին: Ուրեմն՝ այդ տոհմը, որ թերեւս նույնպէս Դովչանցների շառավիղ-
ներից է եղել, Հյուսիսային Արցախ գալուց (կամ վերադառնալուց) հետո շատ համեստ
հետք է թողել, այն էլ միայն Հոռեկի կողմերում:

Դրանում համոզոււմ է նաեւ 1691 թվականի՝ արդեն հիշատակված ժողովի ընդու-
նած փաստաթուղթը: Թղթի ձախ, վերին մասում, եպիսկոպոսների ու վարդապետների
ստորագրութուններից անմիջապէս հետո դրված է Հյուսիսային Արցախի տիրոջ՝ մե-
լի Թուրքիի ստորագրութունը: Նրանից ցած շարունակվում են Արցախի մյուս աշ-
խարհիկ տերերի անունները: Ուշագրավ է, որ վաթսուցինգ ստորագրութունների
շարքում կան նույնիսկ արհեստավորների անուններ, բայց չկա մելի Բեզլար կամ
Աբով, կամ այլ մեկն այդ տոհմից: Դա այն դեպքում, երբ Հյուսիսային Արցախից
մասնակցում էր ոչ միայն մելի Թուրքին, այլև Գետաշենի տանուտեր Բամալ բեկը:

Մելի Թուրքիից հետո լեռնաշխարհում հայտնի է մելի Թամրազը: Նա ինքը, իբ-
րեւ վկա, հիշատակված է 1716 թվականի առուծախի մի փաստաթղթի մեջ¹: Նրա ան-
ունը հանդիպում է նաեւ դատեր գերեզմանաբարին, Հին Պարիս գյուղի գերեզմանոցում
«Այս.տ...ն մելի Թամրազի դուստր. Պանդին...կողակիցի Ազադուր Բոխին ք ՌՄԸ»
(1759): Այդ անունը հանդիպում է նաեւ Գետաշենի գետի ձախ ափին կառուցված
փոքրիկ եկեղեցու դռան վերեւի քարի վրա²:

1720-ական թվականների սկզբներից Հյուսիսային Արցախում փառավոր գործերով
աչքի է ընկել Մելի Եսային: 1721 թ. ապրիլի 1-ին կազմված մի փաստաթղթի մեջ
նա ներկայանում է որպէս Ջրաբերդի մելի Ախիջանի որդի Եսայի³: (Ախիջանը որ-
պէս Ջրաբերդի մելի հայտնի է 1691 թվականի՝ հիշյալ փաստաթղթից): Ի վաճ կա-
րապետի 1724 թ. մի նամակից պարզվում է, որ Գյուլիստանի մելի այս Եսային եւ
իր գորապետ Աբրահամ յուզբաշին (սպարապետ) եւ Ջրաբերդի մելի Սարգիսը եղ-
բայրներ են⁴: Նույն հեղինակի նույն թվականի մեկ այլ նամակից պարզվում է, որ
Ջրաբերդի մելի Սարգիս, Գյուլիստանի մելի Եսայու եւ նրա յուզբաշի Աբրահամի
եղբայրն էր նաեւ Ներսես կաթողիկոսը⁵:

Ինչպէս իմացանք, 1691 թ. Հյուսիսային արցախի տերերն Արցախի մյուս իշխա-
նավորների հետ մեկտեղ մերժել են Երիցմանկաց վանքի Սիմեոն կաթողիկոսին եւ
խոստացել են ընդունել միայն Գանձասարի կաթողիկոս Երեմիային: Իրենց ձեռք
վերցնելով Ջրաբերդի ու Գյուլիստանի ռազմաբազմակամ ուժերը, մելի Ախիջանի
Եսայի, Աբրահամ ու Սարգիս որդիներն իրենց մյուս եղբորը՝ Ներսեսին էլ կաթողիկոս
են դարձնում Երիցմանկաց վանքում: Պատճառը, կարծում ենք, այն էր, որ նրանց

1 Մ.Բարխուտարեանց, Արցախ, էջ 228:

2 Նույն տեղում, էջ 265:

3 Армяно-русские отношения в первой трети XVIII в., т. II, ч. I, Ер., 1964, с. 383.

Մելի Թամրազի անունը հիշատակվում է նաեւ դրանից հետո, ընդհուպ մինչեւ 1742 թ.
(Մ.Բարխուտարեանց, Արցախ, էջ 227), սակայն Հյուսիսային Արցախի կյանքում նրա կողմից
կատարված էական դեր հայտնի չէ:

4 Армяно-русские отношения в первой трети XVIII в., т. II, ч. II, с. 187.

5 Նույն տեղում, էջ 61:

քաղաքական կողմնորոշումը, ինչպէս հետո կտեսնենք, շատ հաճախ իր նկունությամբ
տարբերվում էր Արցախի մյուս իշխանավորների դիրքորոշումից: (Զնայած դրան, Ար-
ցախի ազատագրման ճակատագրական հարցերում Ներսեսը գործում էր Գանձասարի
Եսայի կաթողիկոսի հետ համերաշխ)՝

Հյուսիսային Արցախում ձեւավորված ռազմավարչական կազմավորումը 17-րդ
դարում արդեն բավարար ուժեր էր ներկայացնում՝ ավարառուներից պաշտպանվելու
համար: 18-րդ դարի առաջին տասնամյակներում այդ ուժն ավելի է ամրապնդվում
մանավանդ հանդես գալով Ջրաբերդի հետ համատեղ: Դադատանից ձեռնարկվող ա-
վարառուական արշավանքները, որ այդպէս էլ չէին դադարում, աղետի ենթարկելով
շրջակա զավառները, բախվում էին Հյուսիսային Արցախի ուժեղ դիմադրությանը եւ
ի վիճակի չէին լինում վնաս հասցնել:

Եսայի Հասան-Ջալալյանը ցավով պատմում է 1722 թ. գարնանը Դադատանից ձեռնարկ-
ված մի արշավանքի մասին, որի ընթացքում ավերվեցին եւ կողոպտվեցին խաչներ,
Դիզակը, Գանձակի շրջակա գյուղերը: Պատմիչը միաժամանակ ավելացնում է, որ
ավարառուները չկարողացան վնաս հասցնել Գյուլիստանին ու Ջրաբերդին, որոնք «ի
յամուր տեղիս լերանց իւրեանց ամրացեալ էին, մանավանդ թե երիտասարդք ունան
ընդդիմանային եւս, որ եւ զբազումս հարին ի թշնամեացն...»² Այսինքն՝ ապավինե-
լով իրենց լեռների ամուր տեղերին, նրանք ոչ միայն դիմադրել, այլև բազում թշնա-
միների են ոչնչացրել:

Մելի Եսային իր սահմանների մոտ շարդ է տվել ասպատակիչներին եւ, հետա-
պնդելով նրանց, փախցրել Կուր գետից այն կողմ: Սակայն կատարվեց անսպասելին:
Վրաց Վախթանգ թագավորը, որ Գանձակի խանի դաշնակիցն էր (ավելի ճիշտ՝ գերիշ-
խանութուն ուներ նրա նկատմամբ), ուշացած օգնության եկավ ընդդեմ լեզգիների:
Լսելով, որ Գանձակի շրջակայքի սուլունի մահմեդականներն աջակցել են լեզգիներին,
նրանց պատժելու պատրվակով, իր զորքով ասպատակ սփռեց Ջազանից մինչեւ Գյուլ-
իստան եւ Տրտու գետը, անասելի կողոպուտի ենթարկեց թե՛ մահմեդականների, թե՛
քրիստոնյաների գյուղերը: Կազմակերպեց ահավոր կողոպուտ՝ տանելով անասուններից
սկսած մինչեւ ընտանի մանր թռչուններ, տարավ նույնիսկ կավե ու փայտե հասարակ
տնային իրեր, չխոսելով արդեն թանկարժեքների մասին: Պատմիչը նշում է նաեւ այդ
կողոպուտի բուն պատճառը: Պարզվում է, որ Գանձակի Ջավադ խանը խոշոր գումար
պիտի տար Վախթանգ թագավորին օգնության գալու դիմաց: Նա հրաժարվում է տալ
այդ գումարը, բայց հուշում է՝ գումարի դիմաց շրջակայքից կողոպուտ կատարել³:

Արցախի մելիական ուժերը 1720-ական թվականների սկզբներին աստիճանաբար
համախմբվում են՝ թշնամու դեմ պատվար կանգնելու համար: Սակայն նրանք համոզ-
վում են, որ միայն իրենց ուժը բավական չէ պարսից գերիշխանութունից ընդմիջու

1 Армяно-русские отношения в первой трети XVIII в., т. II, ч. II, էջ 113, 199-200
եւ այլն:

2 Եսայի Հասան-Ջալալեանց, Համառոտ պատմութիւն Աղուանից երկրի, Երուսաղէմ,
1868, էջ 39:

3 Եսայի Հասան-Ջալալեան, Ոշվ. աշխ., էջ 41:

ազատվելու եւ օսմանյան աճող վտանգի առաջն առնելու համար: Նրանք բանակցութեան մեջ են սկսում ռուսաց թագավորի հետ, տեղեկացնում, որ կիսատակվեն Ռուսաստանին, եթե ռուսական զորքն օգնի թոթափելու պարսից գերիշխանությունը: Ինչպես հայտնի է, ցարական իշխանություններն այդպիսի հույսեր տվել էին դեռեւս 18-րդ դարի սկզբներին Իսրայել Օրուն: 1721 թ. ապրիլի 1-ին Պետրոս Առաջինին հղած իր նամակի մեջ Գանձասարի Եսայի կաթողիկոսը հիշեցնում էր տրված այդ հույսերի մասին, նշում, որ Արցախի մելիքներն ու ուղղափառները հույսերով սպասում են:¹

1723 թ. մարտին Գյուլիստանի մելիք Եսային նամակ է գրում Պետրոս Առաջինին, հայտնում, որ տասնմեկ տարի շարունակ «լազգու դոշունը» (զորքը) հարձակվում է Գանձակի, Դիզակի վրա, թալանում, գերեվարում: Ինչ էլ որ մնում է, այն էլ տեղի թուրքերն են ավերում ու թալանում, հարկեր պահանջում: Տեսնելով, որ ուրիշ ելք չկա, իրենք ձեռք-ձեռքի են տվել, ինչպես մելիք Եսային է գրում՝ «...Եւ մերում անճար մնալով, ձեռս տվաք միմեանց, ես, ծառայից ծառա Եսայիս եւ այր ոմն Շրվան անուն եւ Սարգիս անուն, որ այս երկուսս ի Զարապերթու են, ես՝ Եսայիս, Պարտայու եւ մելիք Յովսէփ Գանձայու, միմեանց ձեռս արկաք ժ եւ ժԲ Ռ (10-12 հազար) մարդ ժողովեցանք, պատերազմ մտանք կամ թէ լազկոյ հետ, կամ թէ տանս Աղվանից թուրքաց հետ»:²

Ինչպես պարզ երեւում է նամակից, ներքին ու արտաքին թշնամուց պաշտպանվելու համար հայ իշխանավորները ձեռք-ձեռքի են տալիս, պատերազմի հանում 10-12 հազարանոց միասնական զորք: Սակայն նրանք հզոր դաշնակցի եւ սյուզերենի կարիք էին զգում, որպեսզի մեկընդմիջտ ազատվեն Թուրքիայի ու Պարսկաստանի նվաճողական վտանգից ու հաճախակի կոիվներից: Ռուսաց թագավորին վստահություն ներշնչելու համար մելիքը պատմում է իրենց կատարած ֆաշագործությունների մասին. «Ամուր ծայրս ֆարանց սղնաղ կապեցանք, ի մեծի թագաւորիտ սուրբ աղօթիւն, շատ կոտորումն եւ յաղթութիւն եմք առեալ ի վերայ թուրքաց»:³ Ուղեծրի մեջ խնդրվում է, որ այդ չորս հոգու (ինքը՝ Եսային Գյուլիստանից, Շրվանն ու Սարգիսը Զրաբերդից (Զարաբերդ) եւ Հովսէփը Գանձակից) հպատակությունն ընդունվի եւ ամեն մեկին առանձին-առանձին գրություն տրվի՝ կնքելով՝ հաստատելով նրանց իշխանությունը թվարկված երկրների վրա: Եվ մենք, շարունակում է նա, քո գործությունից գործություն կառնենք, զենք ու զրահ կկապենք ու կնակատենք թշնամու դեմ՝ մինչեւ թագավորի գալը:

Նրանք խնդրում են, որ թագավորի գալուստը շուտ լինի, ընդ որում, երբ բարեհաճի գալ, հրովարտակ ուղարկի վրաց Վախթանգ թագավորին, որպեսզի նա իր զորքով գա Գանձակ, մելիքներն իրենց զորքով միանան նրան, թշնամուն հաղթեն՝ մինչեւ թագավորի ժամանումը:⁴ Այսպիսով, ինչպես տեսնում ենք, մելիքները սոսկ օգնության մասին չէին մտածում, իրենց պաշտպանելու համար նրանք արդեն բավարար ուժ ունեին

եւ «շատ կոտորած ու հաղթություն են տարել թուրքերի նկատմամբ»: Նրանք ձգտում էին ստեղծել լայն ռազմաֆաղափական դաշինք: Մելիք Եսային ռուսաց թագավորին խնդրում է օգնական զորք ուղարկել եւ մելիքական ուժերի ու վրացական բանակի հետ միասին մեկընդմիջտ ազատագրել Անդրկովկասը: Ռուսաստանից ստացվում են հուսադրող խոստումներ, բայց օգնությունն ուշանում է:

Ապափնելով սեփական ուժերին, մելիքություններն ապստամբում են ներքին հակամարտություններից թուլացած Պարսկաստանի դեմ եւ այլեւս չեն ճանաչում նրա գերիշխանությունը: Օգտվելով խառը իրավիճակից, Օսմանյան Թուրքիայի զորքերն առաջ են շարժվում՝ տիրելու համար Անդրկովկասին եւ կանխելու ռուսների առաջխաղացումը: Մելիքները ֆանիցս կարողանում են ետ շարտել օսմանցիներին, օգնության ձեռք մեկնել Սյունիքի ապստամբ ուժերին, որտեղ հաջողվում է Դավիթ Բեկի զլխավորությամբ ձեռք բերել անկախություն:

Ձեռնարկելով պարսկական արշավանքը, Պետրոս Առաջինը տեղեկություն է ուղարկում, որպեսզի Արցախի մելիքները վրաց թագավորի հետ միասին պատրաստվեն իրենց ուժերով դիմավորելու եւ միանալու ռուսական զորքին: 1722 թ. աշնանը Գանձակի մոտ հանդիպում են հայ-վրացական զորքերը, ցնծալից տոնախմբություն է կազմակերպվում՝ ակնկալելով, որ մոտեցող ռուսական զորքի օգնությամբ մեկընդմիջտ կազատագրվեն օտար բռնակալներից: Սակայն ֆաղափական իրադրությունը փոխվում է. Պետրոս Առաջինը չի շարունակում պարսկական արշավանքը եւ դաշինք է կնքում Թուրքիայի ու Պարսկաստանի հետ: Հստ էության, նա համաձայնում է, որ Թուրքիան նվաճի Անդրկովկասը: Բնական է, որ նման պայմաններում խոստացված օգնությունը չէր կարող այլեւս հասնել Արցախի մելիքներին:

Իրադարձությունների այսպիսի կտրուկ շրջադարձը, որ աղետալի եղավ հայության (հատկապես Արցախի) համար, իրականում խոր արմատներ ուներ: Հայտնի է, որ այդ ժամանակներում Ռուսաստանի համար կարեւոր նշանակություն ուներ Պարսկաստանից բերվող մետաքսի առետրական ճանապարհը: 1720-ական թվականներին այդ ճանապարհը հաճախակի փորձությունների էր ենթարկվում Դաղստանի լեզգիների կողմից: 1721 թ. նրանք հարձակվում, ավերում ու կողոպտում են այդ առետրի կարեւոր կենտրոն Շամախին: Եվ ռուսական արշավանքի շարժառիթը, թերեւս, թշնամուն պատժելն էր: Պետրոս Առաջինը ձգտում էր ամրապնդել առետրատնտեսական այդ շահութաբեր գրկերակը:¹ Եվ որովհետեւ այդ առետրի մեջ զգալի դեր ունեին հայերը, որոնց հայրենիքը, մանավանդ Արցախը, ռազմա-ստրատեգիական կարեւոր դիրքում էր գտնվում, Ռուսաստանը, բնականաբար, պիտի ձգտեր ամեն կերպ շահել հայերի համակրանքը, հանդես գալ որպես փրկարար: Այսպիսով, հայերի ազատագրման խնդիրը համընկնում էր Ռուսաստանի շահերին:

Հայ իրականության մեջ (ոչ միայն պատմագրության) հիմնականում գունազարդված, միակողմանի է դիտվել ռուսական ֆաղափականությունն Արեւելում, ընդգծելով հա-

1 Армяно-русские отношения в первой трети XVIII в., том II, ч. I, с. 383.

2 Армяно-русские отношения в первой трети XVIII в., том II, часть II, с. 29.

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում, էջ 30:

1 Այդ մասին հանգամանորեն տես Դ.Անանյան, Ռուսահայերի տնտեսական զարգացումը 19-րդ դարում (1800-1870), Կ.առաջին, Բագու, 1916, էջ 112:

